[illegible]

ԱՌԱՋԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆՍ

## ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

Ազնիւ ունկնդիրներ,

Մի գրքոյկ, 'զոր հրատարակած եմ 1879ին, կը պարունակէր սա տողեր. «Եւրոպա ներչնչեց 'գիս նաեւ իբր մարդ և իբր քերթող. այլ ադոնք անձնական տպաւորութիւններ են, որոցմով պիտի ձեւանայ մի ուրիշ հատոր:»

Այսօր կըսկսիմ կատարել խոստումս, նկարագրելով այն ուղեւորութիւն 'զոր կատարեցի Եւրոպայի մէջ, երբ պատիւ ունէի ընկերանալ Պերճաշնորհ Տ. Մկրտիչ Խրիմեանի: Թող հայատեացներն չը խռովին. չը պիտի խօսիմ իբր Հայ, այլ լոկ «իբր մարդ և իբր քերթող», կամ այնպէս որպէս պիտի կարենար խօսիլ մի Թուրք, ռուս կամ սպարսիկ ուղեւոր:

8 ՄԱՐՏ 1878

Ի՞նչ պիտի մտածէինք այն անհատի վըրայ որ, ունենալով մի բնակարան ուր կ'ապրի երկար ամերէ ի վեր, կը ճանաչէ անոր սենեակներէ լոկ մին: Երկրագունտն է մարդկային էակի բնակավայրն, և որքա՛ն դըժբախտ է նա որ չ'է մեկնած քաղաքէն ուր ծնաւ: Մինչեւ իսկ երբ հայրենի երկիրն [illegible]

[illegible]

կը թանան 48 նշանաւոր կղզիներ, կը սկսին յարձակիլ չոգենաւին վրայ: Ա՛լ չ'ունինք ախորժակ. լոկ Ալեմանն կ'ընթրէ անխռով: Ծովախտէն չարչարուած, կը գալարուիմ անկողնիս մէջ: Մնաք բարեաւ, թխակապոյտ և փրփրուն ծով, տխուր այլ պատմական կղզիներ. չը պիտի կարենամ դիտել «գձեղ անքթիթ, մինչ Մէտիթերանէ», հեռանալով օսմանեան ջուրերէն, կ'ողջունէ վերջապէս հելլէն ջուրերն:

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ

## ԳՐԱԿԱՆ

### ԱԲԲԱ ԲՕՆՍԹԱՆԹԷՆ

ՍԻՐԱՎԷՊ Լ. ՀԱԼԷՎԻԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՕՐԻՈՐԴ Ե. ՕՏԵԱՆ

Այսօր կը փութանք մեր ընթերցողաց հաղորդել «Աբբա Քօնսթանթէն»ի թարգմանութեանն առթիւ Վսեմ. Օտեան Էֆէնտիի գրած ընտիր եւ ընդարձակ յառաջաբանին հետեւեալ մասն.

[illegible]

